ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2024թ. թիվ 775-Ա

Վ.ՍԻՍԱԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 85-րդ կետը և հաշվի առնելով Վ.Սիսակյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վարդուհի Սիսակյանի հետ 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել 3 տարի ժամկետով՝ մինչև 2027 թվականի հոկտեմբերի 11-ը ներառյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Վ.Սիսակյանի հետ 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված աշխատանքային պայմանագրի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 14-ից:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-10-04 09:33:39 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 3
ք.Վանաձոր